ABB
ARMBUSINESSBANK

# *Իրավաբանական ծառայության ավագ իրավախորհրդատու*

## ***Աշխատանքի նկարագրություն***

Դատական գործերով Բանկի շահերի ներկայացում (քրեական, քաղաքացիական):

## ***Աշխատանքային պարտականություններ***

- Դատական ներկայացուցչության իրականացում, դատական գործերով Բանկի շահերի ներկայացում, որոնց վերաբերյալ պատրաստում է դիմումներ, բողոքներ, բացատրություններ, հայցադիմումի պատասխաններ և այլ փաստաթղթեր
- Դատական ակտերի վերաբերյալ եզրակացությունների կազմում
- Կատարողական թերթերի ստացման ապահովում
- Դատական քննության փուլում վեճի առարկայի վերաբերյալ պայմանագրերի, հաշտության համաձայնագրերի նախագծերի կազմում, կատարման հսկում և հաշվառում
- Իր վարույթում գտնվող դատական գործերով տեղեկատվության պատշաճ լրացում Բանկի համապատասխան ծրագրերում
- Իր վարույթում գտնվող գործերով Բանկ ներկայացված դիմումների ուսումնասիրություն և դրանց պատասխանների կազմում
- Բանկի շահերի ներկայացում պետական և ոչ պետական մարմիններում
- Կատարած աշխատանքների ամփոփում և հաշվետվությունների կազմում

## ***Անհրաժեշտ պահանջներ***

- Կրթություն՝ բարձրագույն իրավաբանական կրթություն (դիպլոմավորված իրավաբան, մագիստրոսի կոչումը ցանկալի է և կդիտվի որպես առավելություն)
- Աշխատանքային փորձ՝
    - բանկային համակարգում՝ առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ
    - դատարանում՝ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ
- Բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի իմացություն
- Քաղաքացիական և քրեական օրենսդրության գերազանց իմացություն
- Թիմային աշխատանք
- Բանակցություններ վարելու ունակություններ
- Ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն
- Փաստաբանական արտոնագիրը կդիտվի որպես առավելություն

***Դիմելու ընթացակարգը***

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 18.06.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "**Senior Legal Advisor – Name, Surname**":